ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

16 ապրիլի 2019թ. թիվ 138

ԱՐԱՐԱՏ ՍՈԼՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից 10.04.2019թ. կատարված ուսումնասիրության արդյունքում կազմված տեղեկանքը և «ՀՀ Լոռու մարզի Մեծավանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Արարատ Սոլոյանի 08.04.2019թ. բացատրությունը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. Ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունները ոչ պատշաճ կատարելու համար «ՀՀ Լոռու մարզի Մեծավանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Արարատ Սոլոյանի նկատմամբ կիրառել «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

2. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. ապրիլի 16
ք.Վանաձոր